ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 Նոյեմբերի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

161
(2827)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՍՏԱՑԻ ՏԱՊԱԼՎԵԼ Է ԿԿՀ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ



Նոյեմբերի 19-ից Հայաստանի կոռուպցիայի կանխարգելման անկախ հանձնաժողովը կմնա առանց նախագահի: Պատճառն այն է, որ ԱԺ-ն մինչ օրս փաստացի չի կազմակերպել ԿԿՀ նախագահի ընտրությունը:

Միաժամանակ իշխանության ներսում թեժ պայքար է այդ պաշտոնի համար:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ԿԿՀ նախագահի պաշտոնի համար պայքարում են ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի խորհրդական Հովհաննես Նալբանդյանը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայիս նախագահ Հայկուհի Հարությունյանը եւ հանձնաժողովի վարչության պետ Նարինե Ավետիսյանը: Թե նշվածներից ով կդառնա հանձնաժողովի նախագահ, քաղաքական իշխանությունները դեռ վերջնական որոշում չունեն: Ի վերջո, Հայկուհի Հարությունյանի՞ն ՔՊ-ն ձայն կտա, թե՞ կնախընտրի Ալեն Սիմոնյանի խորհրդականին կամ ՔՊ-ական որեւէ պատգամավորի, որի մասով արդեն պլաններ կան:

Ամեն դեպքում, միայն այսքանով թեկնածուների ընտրության շուրջ առաջացած խառնաշփոթը չի ավարտվում:

Բանն այն է, որ հանձնաժողովի նախագահ Հայկուհի Հարությունյանի պաշտոնավարման ժամկետը լրանում է 2023 թվականի նոյեմբերի 17-ին, եւ այս տարվա օգոստոսին նա դիմել է ՀՀ Ազգային ժողով՝ հայտնելով, որ կազմակերպվի հանձնաժողովի երկու թափուր անդամների ընտրություն: ԱԺ նախագահի աշխատակազմը մինչ օրս ընտրության գործընթացը չի կազմակերպել. կամ նրանք պրոֆեսիոնալիզմի հետ լուրջ խնդիրներ ունեն, կամ էլ կոռուպցիոն պատճառներով չեն կազմակերպել, մինչեւ ԱԺ նախագահի խորհրդականի թեկնածության մասով հարցերը կարգավորվեն:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս ընթացքում ԱԺ-ում ձեւավորվել է ԿԿՀ անդամների ընտրության մրցութային խորհուրդ: Խորհրդի կազմում ընդգրկվել է ՔՊ պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանը (նրան էլ որոշ շրջանակներ փորձում են ուղարկել ԿԿՀ՝որպես նախագահ), ԱԺ ՔՊ-ական խորհուրդը մերժել է ընդդիմադիր Թադեւոս Ավետիսյանի թեկնածությունը: Այսինքն՝ ԱԺ-ում մտադիր են առանց ընդդիմության անկախ հանձնաժողովի անդամներ ընտրել:

Մրցութային խորհուրդը, որտեղ ընդգրկվել են տարբեր կառույցների ներկայացուցիչներ, վերը թվարկված 3 թեկնածուների գործունեության բարեվարքության մասով հարցումներ է ուղարկել տարբեր կառույցներ, եւ, «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն, խորհրդի հարցումներին մինչ օրս ոչ բոլոր կառույցներ են պատասխանել: Այսինքն՝ խորհրդարանական երկրում ԱԺ պաշտոնական հարցումները մնացել են անպատասխան, եւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, որ պարտավոր է ԱԺ բնականոն գործունեությունը ապահովել, ի վիճակի չէ իր պաշտոնական պարտականությունները կատարել:

Հիշեցնենք, որ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենքը սահմանում է հետեւյալը. Ազգային ժողովի նախագահին Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով (սույն հոդվածում այսուհետ՝ աշխատակազմ) մրցույթը հայտարարում է հանձնաժողովի անդամի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան 90, եւ ոչ ուշ, քան 50 օր առաջ, իսկ նրա պաշտոնը թափուր մնալու դեպքում՝ 30 օրվա ընթացքում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ նոյեմբերի 9-ին Չորրորդ գյուղի 10-րդ փողոցում հնչած կրակոցների կիզակետում պատահական մարդիկ կանգնած չեն: Նախնական տեղեկությունների համաձայն՝ կրակոցներ արձակողը Հաղթանակ թաղամասում հայտնի Անտոշն է, որը, ըստ տարածված լուրերի, «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի իրական սեփականատեր Աշոտ Սալազարյանի որդու վարորդն է: Հիշեցնենք, որ նոյեմբերի 9-ին կրակոցներ էին հնչել Երեւանում՝ Չորրորդ գյուղի 10-րդ փողոցում: Դրան նախորդել էր վիճաբանություն, որը վերածվել էր ծեծկռտուքի, եւ հնչել էին կրակոցներ: Դեպքի վայրում ոստիկաններն ու քննիչները հայտնաբերել են ինքնաձիգից արձակված 10-ից ավել պարկուճներ, քարեր, փայտե մահակներ, կոտրված ավտոմեքենաներ եւ հանցագործության բացահայտման համար կարեւոր իրեր: Հայտնաբերվել է նաեւ BMW մակնիշի ավտոմեքենա, որի դիմապակին վնասված է եղել: Մեկ հոգի տեղափոխվել էր հիվանդանոց: Ոստիկաններին հաջողվել է կռվի մասնակիցներից 3 հոգու հայտնաբերել եւ կասկածանքով բերման ենթարկել ոստիկանության Մալաթիայի բաժին: Դեպքի փաստով Մալաթիայի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Նշենք, որ 1000 խոշոր հարկատուների ցանկում ընդգրկված «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 2023 թվականի ընթացքում մեկը մյուսի հետեւից դատական հայցեր է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի դեմ՝ պահանջելով կայացրած որոշումները անվավեր ճանաչել: Մասնավորապես՝ տեղեկացրել էինք, որ 5 հայց է ներկայացվել հիշյալ մարմնի դեմ, որպեսզի տեսչական մարմինը անվավեր ճանաչի կայացրած որոշումները: Նկատենք, որ «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն հանդիսանում է Հայաստանում խոշոր վառելիք ներկրող ընկերություն, սակայն, ըստ ամենայնի, տարրական հրդեհային անվտանգության կանոնները չի պահպանում. պետական օղակների թիրախում է հայտնվել ու ստիպված է դատարաններով կարգավորել հարցերը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ադրբեջանի՝ Արցախի դեմ սանձազերծած ագրեսիայից հետո բռնի տեղահանված արցախցիներին չի հաջողվում համաձայնության գալ: Բանն այն է, որ Արցախի պատգամավորները մտադիր են Հայաստանում արտահերթ նիստ հրավիրել, քննարկել իրենց առաջիկա անելիքները եւ համատեղ հայտարարություն տարածել, բայց, այսպես ասած, խոչընդոտները շատ են: Ինչպես մեր լավատեղյակ աղբյուրներն են փոխանցում, պատգամավորները ԱԺ փոխնախագահ Գագիկ Բաղունցին են փնտրում, որն, ի դեպ, Սամվել Բաբայանի թիմակիցն է, «Միասնական հայրենիք» կուսակցության անդամ: Բաղունցը դե ֆակտո ԱԺ նախագահ Դավիթ Իշխանյանի ապօրինի գերեվարման պայմաններում նրա պարտականություններն է կատարում, եւ հենց նա պետք է ԱԺ նիստ նախաձեռնի: Վերջինս, սակայն, անհետացել է, չի պատասխանում պատգամավորների զանգերին, անգամ թիմակիցներին չի հաջողվում կապ հաստատել նրա հետ: «Ժողովուրդ» օրաթերթը եւս արդեն տեւական ժամանակ է՝ զանգահարում, գրում է նրան, սակայն ապարդյուն. որեւէ արձագանք չկա: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ բացի սա, անհամաձայնություն կա նաեւ պատգամավորների միջեւ, նրանց էլ չի հաջողվում համախմբվել մեկ օրակարգի շուրջ: Պատգամավորների մի մասն էլ, առհասարակ, ՀՀ տեղափոխվելուց հետո կապի դուրս չի գալիս գործընկերների հետ: Թվում էր, թե Արցախի կորստից հետո գոնե պետք է թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի պատգամավորներն իրենց սկզբունքներն ու ներանձնային հարցերը մի կողմ դնեին ու հստակ քայլեր ձեռնարկեին, բայց, ինչպես երեւում է, դասեր չեն քաղում եղածից:

Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ռուբիկ Մխիթարյանը, որը մերժեց արցախցի Տաթեւիկ Վիրաբյանի կալանավորման դեմ պաշտպանների ներկայացրած բողոքը, պայքարում է ԲԴԽ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավորի թափուր տեղի համար: Մխիթարյանը հայտարարագրել է հիփոթեքով ձեռք բերված մեկ բնակարան Երեւանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում՝ դեռ կառուցվող շենքում: Հայտարարագրից հասկանում ենք, որ հիփոթեքի մայր գումարի մնացորդը կազմում է 21 մլն 685 հազար դրամ: Բնակարանը ձեռք է բերվել «ՕՐԴ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» ՍՊԸ-ից: Դատավորի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր առմամբ կազմել է 26 մլն 71 հազար դրամ: Ունեցած վարկերը գրեթե հավասար են դատավորի եկամուտներին. դրանք կազմել են 28 մլն 638 հազար դրամ: Եկամուտներից 12 մլն 230 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի դատական դեպարտամենտից: 67 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է Արդարադատության ակադեմիայից, որից քաղաքացիական այլ պայմանագրերից ստացել է նաեւ 20 հազար դրամ: Մխիթարյանը հիփոթեքի մայր գումարը մարելու համար Պետական եկամուտների կոմիտեից ստացել է 934 հազար դրամ, որը ստացել է՝ եկամտահարկի վերադարձի մասին օրենքի համաձայն: Եկամտի 15 մլն 385 հազար դրամը վարկ է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ից: Նրա կանխիկ դրամական միջոցները կազմել են 3 մլն դրամ եւ 8 հազար 150 ԱՄՆ դոլար: Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 726 հազար դրամ: Դատավորը հայտարարագրել է նաեւ 2000 թվականի արտադրության Mercedes Benz մակնիշի մեքենա՝ ձեռք բերված 2011 թվականին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉ Է ՔՆՆԱՐԿՎԵԼ ՍՏՐԱՍԲՈՒՐԳՈՒՄ

Օրերս ԼՀԿ կառավարման խորհրդի անդամ Դավիթ Խաժակյանը ֆեյսբուքյան իր էջում գրել էր, որ Ստրասբուրգից վերադառնում է Հայաստան՝ զոհունակությամբ, որ Եվրոպայի խորհրդի տեղական եւ տարածքային իշխանությունների կոնգրեսը բացարձակ մեծամասնությամբ վճռարկեց Ադրբեջանի գործողությունները հսկայ դատապարտող դեկլարացիային:

«Այդ փաստաթղթով նաեւ պահանջ դրվեց Ադրբեջանի նկատմամբ՝ ազատ արձակելու Արցախի առաջնորդներին:

Կոնգրեսը աջակցություն է հայտնում Հայաստանին ստեղծված հումանիտար ճգնաժամի դեմ պայքարում եւ որոշում է ուշադրության կենտրոնում պահել Արցախի շուրջ ստեղծված իրավիճակը:

Հաջորդիվ կիրապարակեմ նաեւ ելույթներս»:

Քննարկման մանրամասների մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Խաժակյանի հետ:

-Պարոն Խաժակյան, քննարկման ժամանակ նշել էիք գերեվարված արցախցի նախագահների, պաշտոնյաների հարցը: Ի՞նչ արձագանք տվեցին եվրոպացի պաշտոնյաները:

-Եվրոպայի խորհրդի կոնգրեսում ներկայացրել եմ զեկույց՝ իրավիճակի հետ կապված, եւ զեկույցում առանձին տողով նաեւ նշված էր կոչ-պահանջ՝ ուղղված Ադրբեջանին՝ ազատ արձակելու Արցախի պաշտոնյաներին: Շատ հասցեական:

Բնականաբար, Ադրբեջանը քննարկման ընթացքում փորձեց այդ ձեւակերպումը դուրս բերել դեկլարացիայից, եւ ես դրա դեմ խոսեցի՝ ներկայացնելով, որ դա ոչ միայն ապօրինի գործողություն է եղել, այլ ինքնին պահվող անձինք արդեն մարդու իրավունքների խախտման վկայությունն են: Եվ դեկլարացիան ընդունվեց այնպես, ինչպես նախատեսվում էր, այսինքն՝ ներառված այդ կոչն ու պահանջը պետք է զարգացնել եւ հետագա դիվանագիտական զարգացումներում սա պետք է դարձնել բանակցության առարկա:

-Իսկ բանակցություններում մեզ այդ դեկլարացիան ի՞նչ արդյունք է տալու, քանի որ գիտենք, պարոն Խաժակյան, որ մինչ այս էլ բազմաթիվ փաստաթղթեր են ընդունվել, բանաձեւեր են ընդունվել, սակայն Ադրբեջանը այդպես էլ չի ենթարկվել պահանջներին:

-Ընդհանրապես, այդ գործիքները, մանավանդ՝ պարտված պետություններին, միայն կարող են հավելյալ կաթիլ ավելացնել այն ընդհանուր միջավայրում, որտեղ փորձում ես քո շահերը ներկայացնել եւ առաջ մղել: Այս իմաստով, եթե մենք չունենայինք ըմբռնում, ես կարող էի ասել, որ աշխատելն էլ այդ ուղղությամբ ավելի բարդ կլինի, բայց հիմա քանի որ մենք ունենք միջազգային հանրության ըմբռնումը, այս շարունակական ճնշումներն են բերելու նրան, որ վաղ թե ուշ Ադրբեջանը ազատ արձակի նրանց: Սա միքայլանի գործողություն չէ, այլ անընդհատ ջանք պետք է գործադրել այս ուղղությամբ եւ յուրաքանչյուր փաստաթղթում դետալացված աշխատանք տանել՝ այդ ձեւակերպումների հետ կապված:

-Պարոն Խաժակյան, երբ որ գերիների խոշտանգումների մասին էիք բարձրաձայնում, եվրոպացի պաշտոնյաները ինչպե՞ս էին արձագանքում, տեղյա՞կ էին այդ ամենի մասին, թե՞ իրավիճակին ծանոթ չէին:

-Խոշտանգումները առանձին քննարկման առարկա չեն դարձել, որովհետեւ փաստաթուղթն ուներ ավելի շատ քաղաքական բնույթ, քան մարդու իրավունքների: Հույս ունեմ, որ Արցախի եւ ՀՀ ՄԻՊ-ը իրենց զեկույցներում ներկայացնում են եղած իրավիճակը:

Զրուցեց ԳՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ «ԵՌԱԲԼՈՒՐ»-Ի ՏԱԿ

«Եռաբլուր լացողներ...». հենց այս արտահայտությամբ էր Նիկոլ Փաշինյանը ընդդիմությանը դիմում, երբ պատգամավոր Աղվան Վարդանյանը Նիկոլ Փաշինյանին հորդորեց հեռանալ:

Միջամտեցին այլ ընդդիմադիր պատգամավորներ, եւ լեզվակռվի արդյունքում Փաշինյանն արեց այս հայտարարությունը:

Սակայն, հենց Փաշինյանի իշխանության օրոք «Եռաբլուր»-ի տարածքում «Ռենկո» ընկերությունը մեծամասշտաբ շինարարություն է սկսել: Հենց այդ նույն Toyota-ների եւ Lexus-ների կողքին վեր է խոյանում շինարարական կռունկը: «Ռենկո» ընկերությունը իտալական շինարարական կազմակերպություն է, գլխավոր տնօրենը՝ Ջովաննի Ռուբինին:

Ընկերությունը 2017 թվականից մեծ ներդրումներ է կատարել Հայաստանի էներգետիկ համակարգում (գրեթե 280 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ):

Նիկոլ Փաշինյանը հնարավորությունը բաց չի թողնում նախկինների արածները քարկոծելու, սակայն նրանց կիսատ թողածը վարչապետ Փաշինյանը, սաստելու փոխարեն, ավելի է ծաղկեցնում, եւ իր իշխանության օրոք անգերազանցելի քանակի շինթույլտվություններ է տալիս անթույլատրելի վայրերում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՆՈՐ ՄԱՆԴԱՏ ԿՈՒՆԵՆԱՆ

Խորհրդարանն այս նստաշրջանում երկու նոր պատգամավոր կունենա:

«Հայաստան» խմբակցության նոր պատգամավորն է Լեւոն Քոչարյանը, իսկ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նոր պատգամավորն է Տիգրան Պարսիլյանը:

Երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի որդին՝ Լեւոն Քոչարյանը, նոյեմբերի 6-ին պատգամավորական մանդատ ստացավ:

Լեւոն Քոչարյանը, հիշեցնենք, կալանավորվել էր սեպտեմբերի 25-ին՝ խաղաղ ցույցի ժամանակ իբրեւ կարմիր բերետավորների՝ ճանապարհը բացելու պահանջը չկատարելու եւ ոստիկանության ծառայողների նկատմամբ բռնություն գործադրելու մեղադրանքով, թեեւ տարածված տեսանյութում երեւում է, թե Լեւոն Քոչարյանին բերման ենթարկելիս իրավապահներն ինչպես են հարվածում:

Պատգամավորական մանդատ ստանալուց հետո, օրենքի պահանջով, նա ազատ արձակվեց, որպեսզի ստանձնի պատգամավորական մանդատը:

ՔՊ-ական նոր պատգամավոր Տիգրան Պարսիլյանն էլ երեկ է ԿԸՀ-ից մանդատ ստացել եւ կմասնակցի այսօրվա նիստին:

Հիշեցնենք, որ նա 2018թ.-ին՝ հեղափոխությունից հետո, նշանակվել էր Արարատի փոխմարզպետ: Մեկ տարի պաշտոնավարելուց հետո՝ 2019 թ.-ին, ազատվել էր պաշտոնից: Նա ԱԺ-ում զբաղեցնում էր Ավտոմատ կառավարման եւ տեղեկատվական համակարգերի վարչության պետի պաշտոնը:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԱԼԻԵՎԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ադրբեջանի նախագահը նոր պահանջներ է ներկայացնում:

Ինչպես տեղեկացրել է APA-ն, ԵԱՀԿ ԽՎ ղեկավար Պիա Կաումուի հետ հանդիպման ժամանակ Իլհամ Ալիեւը հայտարարել է Հարավային Կովկասում նոր իրողությունների մասին:

Նրա խոսքով՝ «տարածաշրջանի վերջին իրադարձությունները պետք է դիտարկել մոտ 30 տարի շարունակված օկուպացիայի եւ Ադրբեջանի դեմ Հայաստանի ռազմական ագրեսիայի համատեքստում: Առանց այդ օկուպացիայի եւ ագրեսիայի հետեւանքների դիտարկման, ճիշտ չէր լինի մոտեցումներ ներկայացնել՝ կապված տարածաշրջանի ապագայի հետ»: Ալիեւը միաժամանակ քննադատել է միջնորդներին, որոնց ջանքերը «միանգամայն անհաջող էին»:

Այսպիսով, Ալիեւը ակնարկել է նոր «պայմանների» մասին, որոնց դեպքում Բաքուն կբարեհաճի համաձայնել ապրել խաղաղությամբ: Նախկինում Ալիեւը քանիցս հայտարարել էր «վնասի փոխհատուցման» մասին:

Հիշեցնենք, որ հակամարտությունը եւ հաջորդ մի քանի պատերազմները սանձազերծվել են Ադրբեջանի ղեկավարության կողմից, որը փորձել է ուժային մեթոդներով ստիպել լռել Լեռնային Ղարաբաղին:

ՀԱՄԱՏԵՂ ՎԱՐԺԱՆՔՆԵՐ

Հունաստանի ազգային պաշտպանության գլխավոր շտաբի միջազգային համագործակցության ծրագրի շրջանակներում նոյեմբերի 6-10-ը Ատտիկայի նահանգի Նեա Պերամոս քաղաքում տեղի են ունեցել հատուկ նշանակության ուժերի՝ Հունաստան-Կիպրոս-Հայաստան եռակողմ ձեւաչափով համատեղ վարժանքներ:

Ինչպես տեղեկացնում են Հունաստանում Հայաստանի դեսպանությունից՝ համատեղ վարժանքները Հունաստան-Կիպրոս-Հայաստան 2023 թվականի համատեղ գործողությունների ծրագրի մի մասն են կազմում, որի նպատակն է նպաստելը մասնակից երկրների հատուկ նշանակության ուժերի փոխըմբռնման մակարդակի բարձրացմանը եւ գիտելիքների փոխանակմանը, ինչպես նաեւ նրանց գործնական կարողությունների զարգացմանը:

Հունաստանի ԶՈՒ-ն մասնակցել է համատեղ վարժանքներին՝ Հունաստանի ազգային պաշտպանության գլխավոր շտաբի հատուկ պատերազմի հրամանատարության 1 օպերատիվ խմբով (Special Operations Task Unit - SOTU):

Համատեղ վարժանքների ընթացքում մասնակիցներն իրականացրել են հետեւյալ գործողությունները.

- արագ արձագանքման մարտական կրակ,
- դիպուկահարության մարտավարություն եւ մեթոդներ,
- բնակելի տարածքում մարտի վարման մեթոդներ, մարտավարություն ու ընթացակարգ,
- փոքր ծավալի վարժանքի պլանավորում ու իրականացում:

ԱՎԱՆԵՍՅԱՆՆ ՈՒ ՏԿԵՆ-Ը

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը դարձել է ակտիվ կուսակցական ու, փոխարենը իր պատասխանատվության տակ գտնվող ոլորտի բացթողումներով զբաղվի, որեւէ կուսակցական հավաք կամ իր հետ անգամ կապ չունեցող միջոցառում բաց չի թողնում:

Այսպիսով, երեկ տեղի է ունեցել Տեղական ինքնակառավարման օրվան նվիրված նիստ, որին ներկա են գտնվել փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, մարզպետները, համայնքապետերը եւ միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Միջոցառմանը ներկա էր նաեւ Անահիտ Ավանեսյանը. թե ինչ կապ ունի առողջապահության ոլորտը ձախողած նախարարը տեղական ինքնակառավարման հետ, անհասկանալի է:

Նկատենք, որ նախարար Ավանեսյանը վերջին շրջանում ակտիվորեն մասնակցում է նաեւ կուսակցական բոլոր հավաքներին:

Հավանաբար, նախարարն անհանգստացած է նրանից, որ Նիկոլ Փաշինյանը դժգոհ է իր աշխատանքից, մտադիր է պաշտոնանկ անել իրեն, ու հիմա ջանք չի խնայում Փաշինյանի աչքին բարձրանալու համար:

ՀՐԱԺԱՐՎԵՑ ՄԱՆԴԱՏԻՑ

«Մայր Հայաստան» դաշինքի ավագանու թեկնածու Թաթուլ Պետրոսյանը հրաժարվել է մանդատից: Այս մասին նա գրել է ֆեյսբուքյան իր էջում:

««Մայր Հայաստան» դաշինքի կազմում մասնակցելով Երեւանի ավագանու ընտրություններին՝ ստացել եմ Երեւանի ավագանու մանդատ: Տեղեկացնում եմ ձեզ, որ դաշինքի առաջնորդ Անդրանիկ Թեւանյանի հետ քննարկումների արդյունքում որոշել ենք, որ մեր հռչակած քաղաքական նպատակներին հասնելու համար իմ գործունեությունն առավել արդյունավետ կլինի ոչ ավագանու կազմում, քանզի աշխատանքի որոշակի բաժանում է լինելու: Այդ իսկ պատճառով հրաժարվում եմ ավագանու մանդատից: «Մայր Հայաստան» խմբակցությանը, իմ թիմակիցներին մաղթում եմ արգասաբեր աշխատանք՝ ի շահ երեւանցիների ու մեր մայրաքաղաքի: Միեւնույն ժամանակ տեղեկացնում եմ, որ «Մայր Հայաստան» շարժման եւ նրա առաջնորդի հետ շարունակելու եմ քաղաքական պայքարը՝ հանուն մեր երկրում քաղաքական փոփոխությունների, հանուն Հայաստանի անվտանգության, զարգացման ու հանուն արցախահայության խնդիրների լուծման»:

ԳԱԶԱ

ՏԱՐՀԱՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԵՎ ՋՈՀՎԱԾ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ

Նոյեմբերի 12-ին հումանիտար օգնությամբ առնվազն 143 բեռնատար է մտել Գազայի հատված «Ռաֆահ» հսկիչ անցակետով: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ինչպես X սոցիալական ցանցում հաղորդել է Պաղեստինյան տարածքներում Իսրայելի կառավարության գործողությունների համակարգման վարչությունը, դա մերձավորարեւելյան հակամարտության սրումից հետո օրական առավելագույն ցուցանիշն է՝ անկլավ օգնություն հասցնելու մեկնարկից ի վեր:

«Ռազմական գործողությունների սկզբից (հոկտեմբերի 7-ից) ի վեր՝ այսօր ամենամեծ թվով բեռնատարներն են ստուգվել եւ ուղարկվել Գազայի հատված»,- ասված է հաղորդագրության մեջ:

Ինչպես նշվում է, մարդասիրական օգնությամբ 143 բեռնատար է մտել Գազա «Ռաֆահ» հսկիչ անցակետով:

Դրանցից 72 բեռնատար տեղ է հասցրել պարենային ապրանքներ (1,62 հազար տոննա), 11-ը՝ բժշկական սարքավորումներ (137 տոննա), 22-ը՝ ջուր (444 տոննա), 15-ը՝ առաջին անհրաժեշտության իրեր ժամանակավոր տեղավորման կետերի աշխատանքների կազմակերպման համար (220 տոննա), 23 - խառը բեռներ (351 տոննա):

Գազայի հատված մարդասիրական օգնության առաքումը սկսվել է հոկտեմբերի 21-ին՝ մերձավորարեւելյան հակամարտության սրման սկսվելուց հետո երկու շաբաթ անց:

Հավելենք նաեւ, որ Գազայի հատվածում ռազմական էսկալացիայի սկզբից ի վեր զոհվել են զանգվածային լրատվամիջոցների 49 աշխատակիցներ, որոնք լուսաբանել են տարածաշրջանի իրադրությունը:

Ինչպես հաղորդում է «Ժողովուրդ» օրաթերթը, այդ մասին հաղորդել է Իրանի Tasnim գործակալությունը:

Գործակալության տվյալներով՝ դա կազմում է այս հատվածում աշխատող լրագրողների ընդհանուր թվի 4 տոկոսը:

Ավելի վաղ Պաղեստինցի լրագրողների արհմիությունն իր անհանգստություն է հայտնել Գազայի հատվածում տասնյակ լրագրողների ճակատագրի պատճառով, որոնց հետ կապը կորել է: Կազմակերպությունում նշել են, որ վախենում են իսրայելական զինվորականների կողմից նրանց նկատմամբ հաշվեհարդարից եւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեին եւ այլ միջազգային կազմակերպություններին խնդրել են միջամտել եւ ապահովել նրանց պաշտպանությունը:

Հիշեցնենք, որ Պաղեստինի սահմանապահ ծառայության հայտարարության մեջ նշված է, որ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշն իր հերթին հայտարարել է, որ չորս շաբաթվա ընթացքում պաղեստինյան անկլավում ավելի շատ լրագրողներ են սպանվել, քան ցանկացած այլ հակամարտությունում առնվազն վերջին երեք տասնամյակների ընթացքում:

Առնվազն 421 օտարերկրացիներ եւ երկքաղաքացիություն ունեցող անձինք են ներառված Գազայի հատվածից Եգիպտոսի հետ սահմանի «Ռաֆահ» անցակետով տարհանման ցուցակներում:

Հրապարակված ցուցակներում ընդգրկված են Մարոկոյի, Հորդանանի, Իսպանիայի, Նիդեռլանդների, Պերուի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Շվեդիայի քաղաքացիներ:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԱՐՈՒԹՅԱՆԸ ⇨ ՆԻՍՏ ԿԱՆԻ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հաջորդ երկուշաբթի՝ նոյեմբերի 20-ին, Երեւանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցությունը պատրաստվում է նիստ անել:

Նիստին մասնակցելու է նաեւ Հայկ Մարությանը:

Մեր տեղեկություններով՝ այդ օրը պատրաստվում են քննարկել ավագանու՝ նոյեմբերի 21-ի նիստի մասնակցության եւ օրակարգի հետ կապված հարցեր:

Հիշեցնենք, որ թեեւ Հայկ Մարությանը վերցրել է ավագանու անդամի մանդատը, բայց նիստերին մինչ օրս չի մասնակցել:

«Ազգային առաջընթաց»-ը հակված է մասնակցել նոյեմբերի 21-ի նիստին, իսկ Մարությանի մասնակցության հարցը կորոշվի խմբակցության նիստին:

ՆԻՍՏ ԿՀՅՈՒՐԸՆԿԱԼԻ

Նոյեմբերի 18-20-ը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը կհյուրընկալի Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի աշնանային նստաշրջանը՝ «ԵԱՀԿ-ն ճգնաժամի պահերին. խորհրդարանական վեհաժողովի դերը ներքին եւ արտաքին մարտահրավերները հակազդելու գործում» խորագրի ներքո:

Հայաստանը հունիսի 13-ին ՀՀ ԱԺ նախագահի անունից պաշտոնական նամակով դիմել էր ԵԱՀԿ ԽՎ նախագահին եւ գլխավոր քարտուղարին՝ հայտնելով, որ Հայաստանի խորհրդարանը պատրաստ է աշնանային նստաշրջանն անցկացնել Երեւանում: Հայաստանում կհյուրընկալվեն կառույցի 57 անդամ պետությունների պատվիրակությունների շուրջ 300 պատգամավորներ: Կքննարկվեն Հարավային Կովկասի տարածաշրջանին առնչվող հարցեր: Նախատեսվում են նաեւ երկկողմ հանդիպումներ:

ՆՈՐ ՕԳՆԱԿԱՆ ՈՒՆԻ

Արման Լազարյանը նշանակվել է Երեւանի քաղաքապետի օգնական:

Այս մասին նոյեմբերի 13-ին՝ Երեւանի գործակարգավարական նիստի ժամանակ, հայտնեց քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Քաղաքապետը նշեց նաեւ, որ Արմեն Հարությունյանն էլ նշանակվել է «Երեւանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար:

ՊԱՏՃԱՌՆԵՐ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՏԵԼ Է ԴՊՐՈՑՆԵՐ

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունից պատշաճաբար «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեցին, որ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից հանրակրթական դպրոցներում իրականացվել են 5550 ստուգայց-շրջագայություններ, որի նպատակն իրավական պարզաբանման աշխատանքների իրականացումն է:



Ինչպես հայտնի է, 2023 թվականի հոկտեմբերի 17-ին Ոստիկանության ստորաբաժանումների կողմից կատարված ստուգայցերից մեկի արդյունքում Բաբաջանյան փողոցի ավագ դպրոցի 15-ամյա պատանու պայուսակից հայտնաբերվել է օդաճնշիչ ատրճանակ: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ դպրոցի տնօրենն է անձամբ խնդրել ոստիկանությանը մտնել դպրոց եւ ստուգումներ իրականացնել, քանի որ կասկածներ է ունեցել դպրոցականների մեկի վերաբերյալ. իրավապահները, մտնելով դպրոց, հայտնաբերել են օդաճնշիչ ատրճանակ:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ դպրոցականն իրավապահներին պատմել է, որ ատրճանակը գնել է list.am կայքից եւ որեւէ նպատակի համար չի գնել, այլ պարզապես իրեն հետաքրքրել է ու գնել է: Այս իրավիճակից հետո հարց ուղղեցինք ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանին, թե՝

1. 2023 թվականի հունվարի 1-ից սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության ստորաբաժանումները քանի՞ ստուգայց են իրականացրել հանրակրթական դպրոցներում:

2. Կատարված ստուգայցերի արդյունքում ի՞նչ է հայտնաբերվել աշակերտների պայուսակներում, եւ ի՞նչ ընթացք է տրվել դրանց:

Ի պատասխան՝ Ներքին գործերի նախարարության ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչությունից պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Է. Պետրոսյանը հայտնել էր, որ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից հանրակրթական դպրոցներում իրականացվել են 5550 ստուգայց-շրջագայություններ, որի նպատակը իրավական պարզաբանման աշխատանքների իրականացումն է:

Միաժամանակ ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը աշակերտների պայուսակներում գտնվող իրերի պարունակությունը ստուգելու իրավասություն չունի՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Աշակերտների կողմից ցանկացած իրի հանձնում կատարվում է բացառապես կամավորության սկզբունքով, այդ թվում՝ հարցման մեջ նշված դեպքով կամավորության սկզբունքով դպրոցներում այլ արգելված իրերի հանձման փաստեր ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում չեն արձանագրվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ԾԵԾԵԼ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Վիլնյուսի փողոցի շենքերից մեկում հարեւաններով ծեծել են միմյանց, հարեւանների վեճն այն աստիճան է թեժացել, որ բանը հասել է դանակահարությանը: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ժամը 21:00-ի սահմաններում շենքի շքամուտքի մոտ հարեւանները վիճել են, ողջ շենքը դուրս է եկել հարեւաններին հանգստացնելու, ու բանը հասել է նրան, որ վիճաբանողներից 2002 թվականին ծնված տղամարդը հանել է դանակն ու դանակահարել 43-ամյա տղամարդուն, որին շտապ տեղափոխել են հիվանդանոց: Իսկ ինչի՞ց է սկսվել հարեւանների թեժ վեճը:

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի՝ դանակահարված տղամարդու բնակարանից հարեւանի բնակարան ջուր է անընդհատ կաթացել, ու սա դարձել է միմյանց ծեծի ու դանակահարության պատճառ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՓՇՏԱԿԵԼ Է ՇՂԹԱՆ

Նոյեմբերի 7-ին՝ ժամը 21:15-ին, ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն էր զանգել Ուկրաինայի քաղաքացի 57-ամյա մի կին եւ հայտնել, որ ժամը 14:00-ին իր հետ ծանոթացած անձը Հրազդանի կիրճի ռեստորաններից մեկի մոտ բացահայտ հափշտակել է իր ոսկյա թեւնոցն ու ոսկյա շղթան եւ հեռացել:

Ոստիկանությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ հաղորդումը փոխանցվեց ոստիկանության Կենտրոնական բաժին:

Կազմված փաստաթղթերը փոխանցվեցին քննչական բաժին, որտեղ նախաձեռնվեց քրեական վարույթ: Իրականացվեցին անհետաձգելի գործողություններ, իսկ օպերատիվ միջոցառումների ընթացքում Կենտրոնականի գործընկերներին օգնության եկան ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ծառայողները: Հենց նրանք ստացան հավաստի տեղեկություն, որն էլ համատեղ իրացվեց: Պարզվեց, որ արարքը կատարել էր Արտաշատ քաղաքի 48-ամյա մի բնակիչ: Հետագա միջոցառումներին մասնակցեցին նաեւ Արտաշատի քրեական հետախույզները: 48-ամյա տղամարդը Արտաշատում հայտնաբերվեց, ձերբակալվեց ու տեղափոխվեց ոստիկանության Կենտրոնական բաժին:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ: Տղամարդը ներկայացվել է նախաքննական մարմին:

Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ԴԱՏԱԿԱՆ

ԳՏԱՆ ՊՐԻԳՈԺԻՆԻ ՄԱՐՄՆՈՒՄ

ՌԴ Քննչական կոմիտեի ղեկավար Ալեքսանդր Բաստրիկինը հայտնել է, որ Եվգենի Պրիգոժինի հետ ավիավթարի հետեւանքով զոհվածների մարմիններում նռնակի բեկորներ են հայտնաբերվել, օդանավի վրա արտաքին ազդեցություն չի եղել:

«Բաստրիկինը հայտնել է, որ Եվգենի Պրիգոժինի հետ ավիավթարի հետեւանքով զոհվածների մարմիններում հայտնաբերվել են ձեռքի նռնակների բեկորներ, օդանավի վրա արտաքին ազդեցություն չի եղել: Ցավոք, զոհերի արյան մեջ ալկոհոլի կամ թմրանյութի առկայության փորձաքննություն չի իրականացվել, թեեւ գիտենք, որ Սանկտ Պետերբուրգի ընկերությունում տեղի ունեցած հայտնի իրադարձություններից հետո ԱԴԾ-ն հայտնաբերել է ոչ միայն 10 միլիարդ կանխիկ գումար, այլեւ նաեւ 5 կգ կոկաին: Իմ կարծիքով՝նման փորձաքննություն պետք է անցկացվեր, սակայն այն չի իրականացվել»,- Պուտինին մեջբերում է «ՌԻԱ Նովոստի»-ն:

Հիշեցնենք, որ Կրեմլը խոստացել էր հրապարակել Պրիգոժինի ինքնաթիռի կործանման հետաքննության արդյունքները: Պեսկովը նաեւ ասել է, որ Պրիգոժինի ինքնաթիռի կործանման վերաբերյալ միջազգային հետաքննություն չի լինի:

ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Քրեական վարույթի նախաքննությամբ փաստացի վերականգնվել է պետությունից թաքցված 250 մլն դրամի հարկային պարտավորություն:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Քննչական կոմիտեից հայտնում են, որ քննությամբ պարզվել է՝ ֆիզիկական անձ Ա.Հ.-ն, հանդիսանալով գույքերի իրական սեփականատեր, այլ անձի՝ Ն. Ա.-ի անվամբ իրականացրել է կառուցապատման եւ բնակարանների օտարման գործունեություն Երեւան քաղաքի Ազատության պողոտա 1/10, 1/31, 1/32, 1/34, 1/38, 1/40, 1/41, 1/42 հասցեներում գտնվող «Պրեմիում Հաուս» բազմաբնակարան շենքերի թաղամասում: Նախնական համաձայնությամբ, հաշվարկներում խեղաթյուրված տվյալներ մտցնելու եւ հարկման օբյեկտները թաքցնելու միջոցով առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու նպատակով բնակարանների օտարման գործարքների փոխարեն, նա կնքել է բաժնային սեփականության օտարման գործարքների պայմանագրեր, որի հետեւանքով պակաս է հաշվարկել եւ չի վճարել շուրջ 500.000.000 ՀՀ դրամի հարկ:

Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացված որոշումներով Ա. Հ.-ն եւ Ն. Ա.-ն ձերբակալվել են:

Նախաքննության ընթացքում ձեռնարկված մեծածավալ վարութային եւ քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված անհերքելի ապացույցների ճնշման ներքո վերջիններիս կողմից ներկայացվել է շուրջ 500.000.000 ՀՀ դրամի լրացուցիչ հարկային պարտավորությունների վերաբերյալ եկամտային հարկի տարեկան հաշվարկ, եւ պետական բյուջե է վերականգնվել շուրջ 250.000.000 ՀՀ դրամ գումար:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 10-ից 13-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 158 դեպք, որոնցից 8-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎԻՃԱԿԸ՝ «ՀԻՄՆԱՏԱՎՈՒՇ»-ՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս անդրադարձել է «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամին, գրել, որ հիմնադրամի՝ Իջեւանի Լուսաձոր գյուղում գտնվող անասնաֆերմայում 2016թ.-ի հուլիսին հորելով ոչնչացրել են 3,5 տոննա պանիր, հիմնադրամը տարիներով դատական վեճ է ունեցել Դիտավան գյուղի 4 բնակչի հետ, Լուսաձորի անասնաֆերմայի գարշահոտը տարիներով խեղդում էր միջպետական ճանապարհով անցնողներին, Լուսաձորի պանրագործարանի արտադրանքի վրա, օրենք խախտելով, հայերեն լեզվով մականշում չկար, եւ մեր հրապարակումից հետո հայտնվեց:

«ՀիմնաՏավուշի» աշխատողները, իրենց անունը չնշելու պայմանով, հայտնեցին տեղեկություններ, որ Լուսաձորի ֆերմայում աշխատում է Արցախից անասնապահների 5-հոգանոց բրիգադ, որի ղեկավարը գյուղատնտես Կարինե Բարսեղյանն է: Բրիգադը Լուսաձորում հայտնվել է 44-օրյա պատերազմից հետո, երբ «ՀիմնաՏավուշ» հիմնադրամի տնօրեն Սուրեն Գեւորգյանը գթասրտություն է ցուցաբերել, աշխատանքի տեղավորել:

Արցախցի անասնապահները դաժան են վարվում այդ ֆերմայում պահվող ցեղական կովերի հետ, որից մեկին խոշտանգելով սպանել են, մեկ այլ կովի ոտքը կոտրել, սատկած կովին թաղել են անասնաֆերմայի մոտ կուտակված մեծաքանակ թրիքի մեջ: Աշխատողների վկայությամբ՝ հիմնադրամը Լուսաձորում ունի 4 հատ 100 քմ եւ մեկ հատ 1000 քմ մակերեսով ջերմոցներ, աշխատողների անփույթ աշխատանքի հետեւանքով ջերմոցներում աճեցված բանջարեղենի մի մասը փչացել է, մի մասն էլ (հիմնականում՝ գունավոր բիբարներ) գյուղատնտես Կարինե Բարսեղյանը թաքուն իրացրել է Իջեւանի խանութներում:

Հիմնադրամից մեծ գումարներ են դուրս գրվում անհայտ նպատակներով, հաճախ՝ որպես պարգեւավճարներ՝ չնայած աշխատանքների վատ արդյունքներին: «ՀիմնաՏավուշ» հիմնադրամը ծախսած 8 միլիոն դրամով Մարգարա գյուղում վարձակալած հողերում խոտաբույսեր է ցանել, այդ աշխատանքները ղեկավարել է գյուղատնտես Կարինե Բարսեղյանի ամուսին Գոռը, հնձված խոտի մեծ մասը խոնավ է, պիտանի չէ կովերին կերակրելու համար: Զանգահարեցի «ՀիմնաՏավուշ» հիմնադրամի փոխտնօրեն Տիգրան Տոնոյանին: Նա ժխտեց, որ Լուսաձորի անասնաֆերմայում աշխատողները կովերին վատ են վերաբերվում, որ դրա հետեւանքով կով է սատկել, այն թաղել են գողամբի մեջ: Տոնոյանն ասաց,որ Մարգարայում հնձված խոտը խոնավ չէ, պիտանի է՝ընդունելով, որ որոշ հակեր կարող են խոնավացած լինել:

«ՀիմնաՏավուշ» հիմնադրամի Լուսաձորի ջերմոցների մասին ու այլ հարցերին նա չպատասխանեց՝ասելով, որ դրանք իր իրավասության հարցեր չեն: «ՀիմնաՏավուշ» հիմնադրամի տնօրենը Ֆրանսիայի հայկական խորհրդի նախագահ Սուրեն Գեւորգյանն է, որի կինը՝ Հասմիկը (Նանան), Լուսաձորի պանրագործարանի արտադրանք կաթնամթերքն իրացնող «ԷկոՏավուշ» ՍՊԸ-ի տնօրենն է: Սուրեն եւ Հասմիկ Գեւորգյանները Լուսաձորում քիչ են լինում, ինչը վատ է ազդում Լուսաձորի անասնաֆերմայի ու մնացած կառույցների աշխատանքի վրա: «ՀիմնաՏավուշ» հիմնադրամը ֆինանսավորվում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի, Ֆրանսիայի Օ-Դը -Սեն նահանգի կողմից:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՁԵՌՁԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՎ ՈՒՐԲԱԹՆ ՈՒ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Հայաստանում նախորդ տարի սահմանված պահանջները խախտելու համար Սեւ ուրբաթի եւ Ամանորի զեղչերի ժամանակ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը վարույթ է հարուցել 35 տնտեսվարողների նկատմամբ, որոնք տուգանվել են 100 մլն դրամի չափով: Հանձնաժողովն այս տարի եւս Սեւ ուրբաթին եւ տոներին ընդառաջ՝ ակցիաների ժամանակ, դիտարկելու է տնտեսվարողների վարքագիծը, գնահատելու է ստացվող տարբեր ազդակները:

«Խորհուրդներ բիզնեսին զեղչերի եւ այլ ակցիաների իրականացման վերաբերյալ. իրազեկում Սեւ ուրբաթին ընդառաջ» թեմայով ասուլիսում այս մասին հայտնեց Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ Տիգրան Մարկոսյանը:

«Փորձով էր ապացուցված, որ մենք ակցիաների, այդ թվում՝ զեղչերի իրականացման ոլորտում ունենք բազում խնդիրներ, մասնավորապես՝ երբ որեւէ գնային փոփոխություն տեղի չէր ունենում զեղչի ժամանակ, շատ դեպքերում արհեստականորեն գինը բարձրացնում էին եւ այլն»,-ասաց Մարկոսյանը:

Այս խնդիրները հավաքագրվել են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից: Արդյունքում որոշել են խնդիրները լուծել՝օրենսդրական մակարդակում կարգավորումներ նախաձեռնելով: Հանձնաժողովի մշակած «Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքն ուժի մեջ է մտել 2022թ.-ի հուլիսի 31-ից:

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը դրանից հետո՝ նախորդ տարի՝ Սեւ ուրբաթին, նաեւ Ամանորին ընդառաջ, սկսել է ակտիվ մշտադիտարկման գործողություններ:

Հանձնաժողովի անդամի գնահատմամբ՝ ներկայումս ոլորտն էականորեն բարելավվել է: Հանձնաժողովը դիտարկել է ավելի քան 80 ակցիա: «Դրա ընթացքում շուրջ 35 տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ վարույթներ են հարուցվել: Տնտեսվարողների մի մասը պատճառաբանել է, որ ակցիայի նոր օրենսդրությանը չի տիրապետել, մեղքն ընդունել է եւ խնդրել արագացված վարույթ կիրառել: Մի մասն էլ տարբեր պատճառներով ավելի ուշ է գիտակցել խնդիրը, ավելի ուշ ընդունել մեղքը: Արդյունքում իմ նշած 35 վարույթից մեծամասնության դեպքում ունեցել ենք մեղքի ընդունման փաստեր: Եվ այս բոլոր վարույթների առնչությամբ հանձնաժողովը կիրառել է շուրջ 100 մլն դրամի չափով տուգանք»,-ասաց Մարկոսյանը՝ հավելելով, որ վարույթները ներառում են նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցած ակցիաները:

Հանձնաժողովը դիտարկումներ է իրականացրել տարբեր ոլորտներում՝ կենցաղային տեխնիկայի ոլորտում, հագուստի, շինանյութերի ոլորտում եւ այլն:

Մարկոսյանը ներկայացրեց կարգավորումները: Չեղչի տեսանկյունից առկա են մի քանի բովանդակային հիմնական պահանջներ:

Ընդ որում՝ վաճառքի ընթացքում պետք է տեսանելի լինի այդ միջին գինը, այսինքն՝ սպառողի համար ջնջված գինը պետք է լինի միջին գինը: Զեղչը կարող է տեւել ոչ ավելի, քան 3 ամիս:

Տնտեսվարողը պարտավոր է իրազեկել, թե հայտարարված ակցիան ինչ ապրանքների շրջանակին է վերաբերում, պետք է նշի, թե ակցիան երբ է մեկնարկում, երբ է ավարտվում: «Կարող են հայտարարել զեղչ, գնաք խանութ, պարզվի, որ զեղչն արդեն ավարտված է: Սա անհարմարություն է սպառողների համար, նաեւ խայծ, որ մտնեք առեւտրի օբյեկտ եւ, հնարավոր է, որ որեւէ գնում կկատարեք»,-ասաց հանձնաժողովի անդամը:

Եթե կան հատուկ պայմաններ, թե որ դեպքում է զեղչը կիրառվում, ապա տնտեսվարողը անպայման պետք է իրազեկի:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

Wildberries-Ն ՈՒ ԱՌԵՎՏՐԱՇՈՒԿԱՆ

Wildberries-ի՝ մի քանի անգամ էժան թվացող ապրանքները Հայաստանում շատ արագ սպառվում են: Օնլայն առեւտուրն արդյոք խթանո՞ւմ, թե՞ հարվածում է հայաստանյան առեւտրաշուկային:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է տնտեսագետ Հրանտ Միքայելյանի հետ: «Wildberries-ը օգտագործման տեսակետից միշտ ավելի մատչելի է եւ շատ բարձր տեխնիկական գրագիտություն չի պահանջում: Մի կողմից՝ օնլայն ընկերությունները լուծում են լոգիստիկ խնդիրները, մյուս կողմից՝ ստեղծվում է ավելի ինտենսիվ մրցակցություն, սակայն օնլայն առեւտրի պարագայում, եթե կարելի է Հայաստան մինչեւ 500 դոլար ապրանք ներկրել առանց հարկման, սա նշանակում է, որ Հայաստանի ներքին առեւտուրը կամ մանրածախ առեւտուրը տոտալ փոխվում է. օնլայնը սկսում է շատ ավելի բարձր դեր խաղալ:

Wildberries-ը «խփում» է հագուստի եւ կոշիկի խանութներին: Սա արդեն դարձնում է անմրցունակ տեղական վերավաճառողներին»,- նշեց նա:

Wildberries-ը սկսել է նաեւ ալկոհոլային խմիչքների վաճառքը: Տնտեսագետի կարծիքով՝ դժվար թե ալկոհոլի հարցում հայաստանյան շուկայում փոփոխություն լինի: «Ինչ վերաբերում է ալկոհոլին, կարծում եմ, որ ալկոհոլն այնպիսի ապրանք չէ, որ մարդիկ արտերկրից գնելու եւ սպասելու են երկու շաբաթ, որ գա: Հայաստանում գներն ալկոհոլի տեսանկյունից բավականին մրցունակ են»:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԵՑՎԵԼ Է

«Դաշույն» արտադրական կոոպերատիվին պատկանող հանրային սննդի օբյեկտը (Տավուշի մարզ, ք. Դիլիջան) գործել է իրավական ակտերով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերի խախտումներով: Այդ հանգամանքը պարզել են ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Գեղարքունիքի մարզային կենտրոնի տեսուչները նշված կազմակերպությունում իրականացրած վերահսկողության ընթացքում:

Մասնավորապես՝

- հանրային սննդի օբյեկտի հատակը եւ պատերը չեն եղել նորոգ վիճակում, չեն ունեցել հարթ մակերես, պատրաստված չեն եղել անջրանցիկ, չներծծող, լվացվող նյութերից,
- առաստաղն ունեցել է կեղտի կուտակման, գոլորշու խտացման, անցանկալի մասնիկների թափվելու հնարավորություն,
- չի իրականացվել սննդամթերքի արտադրության գործընթացում օգտագործվող արտադրական շինության, տեխնոլոգիական սարքավորումների եւ գույքի մաքրման, լվացման, ախտահանման, մրջատազերծման եւ կրծողների ոչնչացման գործընթացների պարբերականություն,
- սննդի շղթայի աշխատակիցը չի ենթարկվել պարտադիր պարբերական բժշկական զննության:

Հանրային սննդի օբյեկտի արտադրական գործունեությունը կասեցվել է, սահմանվել է ժամկետ հայտնաբերված խախտումները վերացնելու համար:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 43 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 58-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ը ԿՎԱՃԱՌՎԻ

«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն կվաճառվի կիպրոսյան «Ֆեդիլքո Գրուպ Լիմիրիդ» ընկերությանը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից: Հանձնաժողովի որոշման մեջ նշված է, որ «ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ-ն նոյեմբերի 3-ին դիմել է հանձնաժողով՝ տեղեկացնելով, որ Կիպրոսում գրանցված «Ֆեդիլքո Գրուպ Լիմիթիդ» ընկերությունը ցանկանում է «Արամայո Ինվեսթմենթս Լիմիթեդ» ընկերությունից ձեռք բերել բաժնետոմսերի 100 տոկոսը:

Հանձնաժողովի հրապարակման մեջ մասնավորապես նշված է. «Նկատի ունենալով, որ «ՄՏՍ-Հայաստան»-ը եւ վերջինիս ներկայիս բաժնետիրական շղթայում ընդգրկված կազմակերպությունները պատկանում են ռուսական «Մոբիլնիե Տելեսիստեմի» հանրային բաժնետիրական ընկերությանը, նշված գործարքի կնքման արդյունքում «ՄՏՍ-Հայաստան»-ն այլեւս չի հանդիսանալու «ՄՏՍ խմբի» մասնակից»:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից տեղեկացրին, որ գործարքը դեռեւս չի կայացել. ավելի հստակ պարզ կլինի նոյեմբերի 15-ի նիստում:

Զավեշտալին այն է, որ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագծի որոշման մեջ ոչ մի տեղեկություն չկա «ՄՏՍ-Հայաստան»-ի այս որոշման պատճառների մասին:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմել է նաեւ «ՄՏՍ-Հայաստան»-ին հարցի շուրջ զրուցելու համար, որտեղից խնդրեցին ուղարկել գրավոր հարցում: Պատասխանի դեպքում կհրապարակենք նաեւ ընկերության մեկնաբանությունը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարություն

2023 թվականի դեկտեմբերի 1-ին գումարվելու է «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ համատեղ ներկայության կարգով իրական ժամանակի ռեժիմում Zoom հավելվածի միջոցով:

«Յունիբանկ»-ը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում շարունակվելու է «Բի էս Թի» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված, «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ-ին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 20.11.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին.

- Արարատի մարզ, համայնք Մխչյան, 18-րդ փողոց, 5 հասցեում գտնվող 45,5 ք.մ. բնակելի տուն, 24,1 քմ ծածկ եւ 0,11823 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 1682000 ՀՀ դրամ:

Աճուրդի ավարտը՝ 01.07.2024թ.-ին:

ԱՆԿՈՒՄ

ՀԵՂՈՒԿ ԳԱԶԻ ԳԻՆՆ ՈՒ ՈՐԱԿԸ

Վերջին օրերին «Ժողովուրդ» օրաթերթը տարբեր վարորդներից զանգեր է ստանում այն մասին, որ ոչ միայն հեղուկ գազի գնի աճ է գրանցվել, այլեւ որակն է ընկել:

Պարզելու համար հեղուկ գազի կտրուկ աճի եւ որակի անկման պատճառները «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է տնտեսագետ Թաթուլ Մանասերյանի հետ:

«Գինը կարող է փոփոխվել՝ կախված տարբեր գործոններից: Վերջին օրերում հեղուկ գազի գնի կտրուկ աճը, հնարավոր է, պայմանավորված լինի համաշխարհային գների տատանումներից, մատակարարողի կողմից: Նաեւ չենք բացառում, որ ներքին գործոնների ազդեցությունը լինի այստեղ: Այսինքն՝ հնարավոր է գազի թանկացումը կատարվել է սահմանից այս կողմ՝ ներսում՝ տարբեր սուբյեկտիվ գործոններից ելնելով: Նույն իրավիճակն ազդում է նաեւ որակի վրա: Կարծում եմ՝ գնի բարձրացումը եւ որակի անկումը չի կարելի դիտարկել միայն տնտեսական ասպարեզի սահմաններում: Այն կարելի է դիտարկել նաեւ քաղաքական եւ այլ տարբեր ոլորտների սահմաններում», - նշել է Թաթուլ Մանասերյանը:

Հիշեցնենք, որ օրերս «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ խմբագրություն են ահազանգում բազմաթիվ վարորդներ այն մտահոգությամբ, որ ոչ միայն հեղուկ գազի գինն է բարձրացել, այլ նաեւ որակն է ընկել, նախկինը չէ:

Պարզվում է, որ հեղուկ գազի կալորիականությունը 25%-ով նվազել է: Եթե նախկինում հնարավոր էր 5000 դրամի լցնել 25 լիտր հեղուկ գազ եւ երեւանյան փողոցներով վարել մոտ 200 կմ 2-2.5լ/աշխատանքային շարժիչի դեպքում, այսօր արդեն նույն 25 լիտրով նույն 2-2.5լ/աշխատանքային շարժիչի դեպքում նույն երեւանյան փողոցներով հնարավոր է լինում վարել 145-150 կմ, այդ էլ՝ այն դեպքում, որ հետազոտություն անցած մեքենաները չունեն որեւէ խնդիր, ըստ այդմ՝ վառելիքի կորուստ:

Այն, որ ստացվում է՝ հեղուկ գազի մեկ լիտրի արժեքը այսօր 200 դրամ է՝նախկին 140-ի համեմատությամբ, դա հարցի ողբերգականության միայն մի հատվածն է. գների բարձրացմանը զուգահեռ՝նվազում է նաեւ կալորիականությունը՝ վնասելով միջին վիճակագրական եւ դրանից էլ նույնիսկ ցածր աշխատավարձ ստացող վարորդի վճարունակությանը:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հետ՝ պարզելու, թե ինչն է նման խայտառակ վիճակի պատճառը, եւ թե արդյոք որեւէ քայլ ձեռնարկվում է այդ ուղղությամբ, սակայն մեր զանգերն այդպես էլ անպատասխան մնացին:

ՏՀԱՃՈՒԹՅՈՒՆ

Wildberries-Ի ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթը որոշ ժամանակ առաջ գրել էր, որ Wildberries-ը իր հաճախորդների համար տհաճ անակնկալ է պատրաստել:

Այսպիսով, այն չուշացավ: Արդեն մի քանի օր է՝Wildberries-ի ապրանքի ստացման կետերում պահարանների կամ պատերի վրա կարող եք տեսնել տոպրակների շարք:

Մեծ պոլիէթիլենային տոպրակներն արժեն 22 դրամ: Wildberries նշանով գունավոր տոպրակների արժեքները տատանվում են՝ ըստ չափերի համապատասխանաբար 26 դրամ, 35 դրամ, 65 դրամ:

Հավելենք նաեւ, որ տոպրակների գումարը գանձվելու է Wildberries-ի ձեր օգտահաշվին կցված քարտից:

Հիշեցնենք, որ ավելի վաղ ՏԱՀ-ը հայտնեց, որ Wildberries հավելվածում պատվերի հաստատման լրացուցիչ տարբերակ է ներմուծվել:

Wildberries հավելվածում հայտնվել է նոր տարբերակ, որը, ըստ ցանկության, կարելի է ակտիվացնել:

Տվյալ գործառույթը միացնելու համար հարկավոր է թարմացնել հավելվածը ու ընտրել լրացուցիչ պատվերի հաստատման եղանակ:

«Շուկան մշակել է հավելվածում պատվերի լրացուցիչ հաստատման ֆունկցիոնալությունը, որպեսզի նվազագույնի հասցնի «պատահական» պատվերների հնարավորությունը այլ սարքերի, ընտանիքի անդամների կամ երրորդ անձանց կողմից: Wildberries հավելվածում հայտնվել է նոր տարբերակ, որը կարող է ակտիվացվել՝ ըստ ցանկության»,- հայտնում են ընկերությունից:

Այս գործառույթը միացնելու համար հարկավոր է թարմացնել հավելվածը եւ ընտրել լրացուցիչ պատվերի հաստատման եղանակ, տարբերակներից է PIN կոդը, ինչպես նաեւ Touch ID եւ Face ID տեխնոլոգիաները (եւ դրանց անալոգները Android-ում):

Հոկտեմբերի սկզբին Wildberries-ը հայտնել էր, որ սկսել է նմանատիպ լուծման մշակումը՝ դեպքերից մեկի հետ կապված, երբ երեխան մոր հավելվածում 250 հազար ռուբլու պատվեր էր կատարել: Ընկերությունը, հիմնվելով օգտատերերի վարքագծի վերլուծության վրա, եկել է այն եզրակացության, որ իր վերջին պատվերը կարող էր իսկապես երեխայի կողմից տրվել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀԱՅՏՆԵՑ

ԱՐՑԱԽԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արցախի Հանրապետության «Պատմական միջավայրերի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի ղեկավար Արմինե Հայրապետյանը նշեց, որ 2023թ. սեպտեմբերյան իրադարձություններից հետո Արցախից Երեւան կարողացել է տեղափոխել թանգարանի որոշ նմուշներ: Այդ նմուշների մասին նա խոսել չցանկացավ՝ անվտանգությունը պահելու համար:

Միաժամանակ, Արմինե Հայրապետյանը «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեց 44-օրյա պատերազմից հետո «Պատմական միջավայրերի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի կատարած աշխատանքների մասին.

«Պետք է ասեմ, որ 44-օրյա պատերազմից հետո բավականին ակտիվ աշխատանքներ է տարել «Պատմական միջավայրերի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ը: 2021թ. հունվարից ծառայությունն իր առջեւ դրել է մի քանի առաջնահերթություններ, որոնցից մեկը մշտադիտարկումն էր այն հուշարձանների, որոնք գտնվում էին ակտիվ ռազմական գործողությունների գոտում կամ դրանց շատ մոտ:

Հաջորդ առաջնահերթությունը տվել էինք համացանցի միջոցով մշտադիտարկումն այն հուշարձանների, որոնք արդեն գտնվում էին թշնամու վերահսկողության ներքո եւ վտանգված էին: Մենք փորձում էինք ադրբեջանական օգտատերերի էջերից տեղեկատվություն ստանալ այդ հուշարձանների մասին: Իհարկե, սկզբնական շրջանում շատ էին համացանցում տարածվում մեր հուշարձանների նկատմամբ ադրբեջանցիների վանդալիզմը եւ բռնարարքները, սակայն ընթացքում այն նվազեց: Ենթադրում եմ, որ այդ արարքները նվազեցին այն պատճառով, որ մենք այդ արարքներն օգտագործում էինք իրենց դեմ: Այսինքն՝ իրենք այդ քայլով վնասում էին իրենց, եւ աստիճանաբար նվազեց այդ վանդալիզմի ցուցադրությունը: Շեշտը դրել էինք նաեւ նոր հուշարձանների հաշվառման վրա, եւ կարող եմ նշել, որ մինչ բլոկադան կարողացել ենք մոտ 600 հուշարձան ֆիքսել, որոնք մինչ այդ ցուցակներում չկային: 2022թ. ՊՈԱԿ-ը նախաձեռնել է պեղման աշխատանքներ Ծովատեղ համայնքի Կարմիր եկեղեցու տարածքում: Ըստ աղբյուրագիտության՝ այդտեղ էին թաղված Խամսայի մելիքությունների՝ շատ քիչ ուսումնասիրված, մելիքական տներից մեկի՝ Մելիք-Փաշայանների տոհմական գերեզմանոցը»:

Մեզ հետ զրույցում Արմինե Հայրապետյանը նշեց, որ Արցախի շրջափակման ժամանակ դադարեցվել են պեղման աշխատանքները՝ կապված վառելիքի բացակայության հետ:

Հավելենք, որ «Պատմական միջավայրերի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ն ունի իր ֆեյսբուքյան, յութուբյան, թելեգրամյան էջերը եւ Artsakh Monuments կայքը, որն այս պահին չի գործում՝ ֆինանսական խնդիրներից ելնելով:

ԹԱՏՐՈՆ

ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՆՑ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Սանկտ Պետերբուրգի՝ ավելի քան 250 տարվա պատմություն ունեցող Ալեքսանդրինյան թատրոնը քառասուն տարվա ընդմիջումից հետո կրկին Երեւանում է: Լեգենդար թատրոնը Հայաստանում է հյուրընկալվել Երեւանյան միջազգային թատերական փառատոնի շրջանակում եւ հանդես կգա Նիկոլայ Գոգոլի «Ամուսնություն», Վալերի Սեմենովսկու «Արարածը» ներկայացումներով:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ նոյեմբերի 10-ին Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում Ալեքսանդրինյան թատրոնը հանդիսատեսին ներկայացրեց «Ամուսնություն» բեմադրությունը, որը երեւանյան բեմում կլինի նաեւ նոյեմբերի 11-ին:

Դասական պիեսը, որը բեմադրվել է՝ պահպանելով Ալեքսանդրինյան թատրոնի ավանդույթները, արժանացավ բուռն ծափողջույնների, «բրավո» վանկարկումների:

Սունդուկյանի անվան թատրոնի տնօրեն Վարդան Մկրտչյանը հիշեցրեց՝ մեկ ամիս առաջ Մայր թատրոնը փայլուն եւ անմոռանալի հյուրախաղերով հանդես է եկել Սանկտ Պետերբուրգում՝ ներկայացնելով Արմեն Էլբակյանի, Լիլի Էլբակյանի բեմադրությունները: «Արմեն Էլբակյանի «Թռիչք կկվի բնի վրայով» ներկայացումը խաղացել ենք Ալեքսանդրինյան թատրոնի մեծ եւ պատմական բեմում: Դա պատմական իրադարձություն էր, նոր էջ հայ եւ ռուս թատրոնների համար»,- ընդգծեց Մկրտչյանը՝ վստահեցնելով, որ թատրոնների համագործակցությունը շարունակական կլինի:

Ալեքսանդրինյան թատրոնի գեղարվեստական ղեկավար Վալերի Ֆոկինը, որը նաեւ «Ամուսնություն» ներկայացման ռեժիսորն է, շեշտեց՝ ցուցադրելու են այն ներկայացումները, որոնք իրենց թատրոնի դիմագիծն են:

«Մեր թատրոնը պատմական է, 257 տարեկան է, սակայն դուք շատ լավ հասկանում եք՝ եթե բեմում էլ այդ տարիքի դերասաններ լինեն, մահացու կլինի, ուստի մեր խնդիրն է չհամապատասխանել այդ փառահեղ տարիքին. ինչու փառահեղ՝ քանի որ կան փառահեղ ավանդույթներ, որոնք պետք է պահպանել եւ միեւնույն ժամանակ դրանք համապատասխանեցնել մեր օրերին»,-ասաց նա եւ հավելեց՝ քաղաքական գործիչներն այրում են կամուրջները, իսկ արվեստի գործիչները՝ վերականգնում դրանք: Անդրադառնալով «Ամուսնություն» ներկայացմանը, որը տասնհինգ տարեկան է՝ Ֆոկինն ընդգծեց՝ անկախ նրանից, թե երբ է բեմադրվում ներկայացումը, իրենք անում են ամեն բան, որ այն համապատասխանի օրվա իրականությանը, այն ամենին, ինչ տեղի է ունենում պատուհանից այն կողմ՝ կյանքում: «Մենք հետեւում ենք, որ ներկայացումը լինի կենդանի: Այս ներկայացումը ինքդ քեզ պահպանելու մասին է: Գուցե դա տարօրինակ թվա, քանի որ պիեսը կատակերգական է, բայց մենք նրան մոտեցել ենք այն տեսանկյունից, որ գլխավոր հերոսը կարողանում է պահպանել իր մարդկային նկարագիրը, մարդկային անկախությունը: Այս թեման հավերժական է. այդպես է եղել քսան, հարյուր եւ հազար տարի առաջ»,- նշեց Վալերի Ֆոկինը:

ՍՊՈՐՏ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ՝ ՍԱՄԲՈՅԻՑ

Հայաստանի սամբոյի հավաքականի գլխավոր մարզիչ Վովիկ Խոջոյանը ամփոփեց Երեւանում կայացած սամբոյի աշխարհի առաջնությունում Հայաստանի ընտրանու գրանցած արդյունքները:

«10-ը մեդալը սամբոյի աշխարհի առաջնությունում գերազանց արդյունք է: Մյուս տարի մեր երիտասարդները կարդարացնեն բոլորիս սպասելիքները: Մեր մարզիկներին չբավարարեց վստահությունը սեփական ուժերի նկատմամբ եւ տանը հանդես գալու հանգամանքը: Բոլոր երկրներն աշխարհի առաջնության կազմակերպվածությունը գնահատում են շատ բարձր»,-այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց հավաքականի գլխավոր մարզիչը:

Մասնագետի կարծիքով՝հայ մարզիկները նախորդ տարիներին նմանատիպ արդյունք չէին գրանցել:

Երեւանում նոյեմբերի 10-12 կայացած սամբոյի աշխարհի առաջնությունում Հայաստանը նվաճեց 10-ը մեդալ՝5 արծաթե, 5 բրոնզե մեդալ: Մեդալային ոչ պաշտոնական հաշվարկի առաջատարը միջազգային ֆեդերացիայի դրոշի ներքո հանդես եկող ռուս մարզիկներն էին, որոնք ընդհանուր առմամբ նվաճեցին 18 մեդալ:

ԿՀԵՌԱՑՆԻ ՄԱՐԶՉԻՆ

Իտալիայի չեմպիոն «Նապոլիի» նախագահ Աուրելիո Դե Լաուրենտիսը որոշել է այս շաբաթ պաշտոնանկ անել թիմի ֆրանսիացի գլխավոր մարզիչ Ռուդի Գարսիային. հաղորդում է իտալական La Gazzetta dello Sport-ը:

Իտալիայի առաջնության 12-րդ տուրում հետնապահ «Էմպոլիից» կրած 0:1 հաշվով պարտությունից հետո Դե Լաուրենտիսը Ռուդի Գարսիային արգելել է անցկացնել հաջորդ մարզումը:

«Նապոլիի» գլխավոր մարզիչի հիմնական թեկնածուն իտալացի Ֆաբիո Կանավարոն է, որը «Բենեւենտոյից» հեռացվելուց հետո չունի մարզչական աշխատանք:

Ա Սերիայի 12 տուրից հետո «Նապոլին» 21 միավորով չորրորդն է:

ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԵԼ Է

Մադրիդի «Ռեալը» աշխատանքից հեռացրել է գլխավոր բժիշկ, խորվաթ Նիկո Միհիչին, որն Արքայական ակումբի բժշկական շտաբը գլխավորում էր 2017 թվականից. հաղորդում է իսպանական Marca-ն:

Պատճառը մրցաշրջանի սկզբում մի քանի ֆուտբոլիստների բազմաթիվ վնասվածքներն են եւ դրանց կրկնությունը:

Մասնավորապես, «Ռեալի» նորեկ, թուրք կիսապաշտպան Արդա Գյուլերը մի քանի մկանային վնասվածքների կրկնում է ունեցել:

Նախկինում էլ Միհիչի աշխատանքից դժգոհ են եղել Քարիմ Բենզեմայի, Դավիդ Ալաբայի եւ Դանի Սեբալյոսի վնասվածքներից հետո վերականգնողական մեթոդների հարցում:

● *Նոյեմբերի 15-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Անտանիք ընտանիք» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է աշխատող կանանց տրամադրվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդը:

Մետաքսիա Մարգարյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դիմողի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ աշխատող կանանց տրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ՝ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում:

Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին եւ կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին: Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին որդեգրելու կամ երկու եւ ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայտնում ենք, որ ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս: Հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով: Եթե աշխատողին ամենամյա արձակուրդը չի տրամադրվել մեկ տարուց ավելի ժամանակահատվածով, ապա հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ կարող են արդյոք պետության կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը տրամադրվել կառուցապատման իրավունքով: Եվ ուզում եմ իմանալ, թե ինչպես կարող է տնօրինվել հողամասի կառուցապատման իրավունքը:

Յունան Մուրադյան (51 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը կառուցապատման իրավունքով տրամադրվում են միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերից: Կառուցապատման իրավունք ունեցող անձը կարող է այդ իրավունքը տնօրինել՝ փոխանցել այլ անձի, ազատորեն օտարել, գրավ դնել այն, ինչպես նաեւ կատարել այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2041-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կառուցապատման իրավունքը անձի իրավունքն է այլ անձի պատկանող հողամասում քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաեւ հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ, սահմանված կարգով կառուցել շենքեր եւ շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել եւ կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում տիրապետել եւ օգտագործել այդ գույքը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանում նոյեմբերի 12-ին 4-րդ անգամ անցկացվել է լատինաամերիկյան պարերի աշխարհի երիտասարդական առաջնությունը:

Մրցաշարին 33 երկրի 59 պարային զույգեր են մասնակցել: Հայաստանից լավագույն արդյունքը ցույց է տվել Նիկիտա Զեմլյանոյ-Կսենիա Արսենտիեվա պարային զույգը՝ զբաղեցնելով 4-րդ հորիզոնականը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011 Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+1 +5	+10 +13
Կոտայքի լեռներ	+1 +4	+11 +14
Կոտայքի նախալեռներ	+4 +6	+16 +18
Գեղարքունիք	-2 +2	+9 +13
Լոռի	-2 +3	+12 +15
Տավուշ	+2 +7	+13 +17
Արագածոտնի լեռներ	-2 +1	+9 +11
Արագածոտնի նախալեռներ	+4 +7	+14 +18
Արարատ	+3 +7	+18 +20
Արմավիր	+2 +5	+17 +19
Վայոց ձորի լեռներ	-1 +1	+9 +13
Վայոց ձորի նախալեռներ	+3 +7	+17 +20
Սյունիքի հովիտներ	+6 +10	+17 +21
Սյունիքի նախալեռներ	0 +5	+17 +20
ԼՂՀ	+9 +13	+20 +24
Երեւան	+1 +3	+15 +19

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*